ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

« ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/134» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

14.07.2020թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Անտոնյան /ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Բագրատունյան /գնահատող/, Մ. Մանուկյան /գնահատող/, Ս. Ղազարյան /բացող/, Ջ. Հովհաննիսյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Թ.Հովեսյան

1. Գնման ընթացակարգի հրավերում փոփոխություն կատարելու մասին

(Գ. Անտոնյան)

1.1 «**ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/134**» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում տեղի է ունեցել փոփոխություն, այն է՝

«Ամանորյա տոներին ընդառաջ անհրաժեշտ է երեխաների համար ձեռք բերել քաղցրավենիքի նվեր փաթեթներ, յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ

• 2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե սալիկ,
• 1 տուփ կարամել պոմադային և սառնաշաքարային (՝Ձմեռ Պապ՝ կամ համարժեքը) պարունակությունը.
Կարամել-թեյի, սրճային, կաթնային, շոկոլադե, կակաո;կապուչինո
պոմադային - նարինջ, ելակ, լիմոն, մալինա, բալ, խնձոր
• 3 հատ մրգային /կիտրոն, ելակ խնձոր / համերով կարամել ձողիկի վրա
• 1 տուփ շոկոլադե-կաթնային քառակուսի վաֆլի – կաթնային և կակաո փոշու հավելումներով
• 4 հատ ուղղանկյունաձև մրգային մրգանուշ– կիտրոնի,դյուշեսի,նարինջի,բալի,ելակի համերով
• 2 հատ կոնաձև շոկոլադե կոնֆետ կրեմային միջուկով
• 2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե կոնֆետ մրգային միջուկով - բալ, կիվի,անանաս,նարինջ,կիտրոն
• 3 հատ ուղղանկյունաձև կաթնային սուֆլե - խտացրած կաթի հավելումով և մրգային մրգանուշի կտորներով,պատված կաթնային շոկոլադով
• 2 հատ կլոր շոկոլադապատ - հարած սպիտակուցային մասսա խնձորի պյուրեի և վանիլինի հավելումներով
• 2 հատ ուղղանկյունաձև վաֆլի - կաթնային միջուկով և իրիսի համով հատային փաթեթավորված վաֆլի
• 3 հատ ուղղանկյունաձև կոնֆետ– շոկոլադապատ, գետնանուշի հավելումով:

Թվարկված բոլոր սննդամթերքների **անվտանգությունը** պետք է համապատասխանի Եվրասիական տնտեսական միության «Սննդամթերքի անվտանգության մասին» ՏՊՏՀ 021/2011, **փաթեթավորում՝** «Փաթեթվածքի անվտանգության մասին» ՏՊՏՀ 005/2011 տեխնիկական կանոնակարգերին:

Ընդհանուր փաթեթի քաշը ոչ պակաս 0,6-0.7 կգ:

Գինը իր մեջ ներառում է փաթեթավորումը՝ ամանորյա պատկերներով, մաղթանքներով, ինչպես նաև առաքումը պահանջվող հասցեի՝ վարչական շրջանի տարածքում:

Փաթեթավորման համաձայնեցում պատվիրատուի հետ»

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին մասին

(Գ. Անտոնյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

ա) Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

բ) Գնանշման հարցման ընթացակարգի հրավերի և հայտարարության փոփոխության տեքստերը հաստատելու մասին.

գ) Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. Գնանշման հարցման ընթացակարգի հրավերի և հայտարարության փոփոխության տեքստերը հաստատելու մասին

(Գ. Անտոնյան)

Հանձնաժողովը որոշեց՝ հաստատել [illegible] հրավերի և հայտարարության փոփոխության տեքստերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4. Գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ. Անտոնյան)

Գնման ընթացակարգի հայտերը կբացվեն էլեկտրոնային եղանակով www.armeps.am կայքի միջոցով՝ 2020 թվականի հուլիսի 23-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Գ. Անտոնյան

---------- Ս. Բագրատունյան

Անդամներ՝ ---------- Մ. Մանուկյան

---------- Ս. Ղազարյան

---------- Ջ. Հովհաննիսյան

Քարտուղար՝ ---------- Թ.Հովեսյան